ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄՄՁԲ-7/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 5-ը հունիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ» ԱՁ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Երվանդա» ՍՊԸ-ի հետ), այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.04.2018թ. կնքված № ԲՄՄՁԲ-7/2-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 5 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 4 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ" ԱՁ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Շիրակի փ., 68շ, բն.19
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գանձապետական վարչություն	Հ/հ 150028023280100
Հ/Հ 900011144078	ՀՎՀՀ 87378664
ՀՎՀՀ 02522157	
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ՋԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԾՁԲ-7/2-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/մ	Միավորի գինը ցանց հեռավորության /ՀՀ դրամ/				
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300 կմ-ից ավելի
Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ /ՊՆ զորամասեր/, այդ թվում							
1. Գույքի վերանորոգում							
[illegible]							
1	1 գծամետր մետաղական կարկասի ուղղում	գ/մ	900	945	993	1 043	1 096
2	1 գծամետր մետաղական կարկասի փոխարինում նորով	գ/մ	1 000	1 050	1 103	1 159	1 217
3	1 գծամետր փայտե մասերի փոխարինում նորով	գ/մ	1 000	1 050	1 103	1 159	1 217
4	1 գծամետր մետաղական կարկասի ներկում	գ/մ	900	945	993	1 043	1 096
[illegible]							
1	Փականի վերանորոգում	հատ	3447	3 620	3 801	3 992	10
2	Փականի փոխարինում նորով	հատ	10	10	10	10	10
3	Ծխնու վերանորոգում	հատ	3447	3 620	3 801	3 992	10
4	Ծխնու փոխարինում նորով	հատ	10	10	10	10	10
5	Դռան փոխարինում նորով	հատ	10	10	10	10	10
6	Դռան հերմետիկի փոխարինում նորով	հատ	5742	6 030	6 332	6 649	10
7	Պատերի հարթեցում 1մ2	մ2	5742	6 030	6 332	6 649	10
	Ընդամենը՝առավելագույն գումարը	4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ					

Մատուցվելիք ծառայությունների հեռավորությունները հաշվարկված է ք.Երևանից:

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Վերանորոգման աշխատանքները պետք իրականացվեն զորամասերում, միայն խիստ անհրաժեշտության դեպքում նախապես ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության գրավոր թույլտվություն ստանալուց հետո տեղափոխել կազմակերպության արհեստանոց:
Բոլոր փոխարինվող պահեստամասերը, նյութերը և նյութական միջոցները չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

Հ/հ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
2. Ավտոտանքների ռեֆրիժերատորի ստանցնող համակարգի վերանորոգում			
[illegible]			
1	Շարժիչի լվացում	միավոր	1000
2	Ծնկաձև լիսեռի հղկում	միավոր	10000
3	Արմատական և առանցքային առանցքակալների փոխարինում նորով	միավոր	13000
4	Մխոցի փոխարինում նորով	միավոր	21000
5	Մխոցաօղերիփոխարինում նորով	միավոր	3000
6	Շարժիչի իրանի գլանների հղկում	միավոր	27600
7	Ներդիրների փոխարինում նորով	միավոր	2400

8	Ծնկաձև լիսեռի կիսալուսինների փոխարինում նորով	միավոր	2400
9	Գլանների գլխիկի հղկում և արտածման ու ներածման փականների փոխարինում նորով	միավոր	3000
10	Շարժիչի հավաքում	միավոր	1000
11	Գեներատորի ստուգում-կարգավորում	միավոր	1000
12	Կորբյուրատորի ստուգում-կարգավորում	միավոր	1000
13	Բենզինային մղիչի ստուգում-կարգավոր	միավոր	1000
14	Շարժիչի փորձարկում	միավոր	1000
15	Ներսի տարածքի և հատակի երեսապատված թիթեղի վերանորոգում	մ2	6000
16	Արտաքին շերտի մետաղական թիթեղի վերանորոգում	մ2	4000
17	Արտաքին շերտի պաշտպանիչ գույնով ներկում	մ2	1500
	Ընդամենը՝առավելագույն գումարը 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ		

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Վերանորոգման աշխատանքները պետք իրականացվեն զորամասերում, միայն խիստ անհրաժեշտության դեպքում նախապես ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության գրավոր թույլտվություն ստանալուց հետո տեղափոխել կազմակերպության արհեստանոց:
Բոլոր փոխարինվող պահեստամասերը չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/Մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
	3. Կունգի վերանախշում հացատարի		
1	Կունգի կողային մասում դռան բացում	հատ	18000
2	Կունգի կողային մասում դռան տեղադրում	հատ	20000
3	Դռան փականի տեղադրում	հատ	20000
4	Դռան ծխնու տեղադրում	հատ	20000
5	Մետաղական անկյունակից պատրաստված ուղղորդիչի հավաքում կունգի ներսի տարածքում յուրաքանչյուր բացված դռան դիմաց: ՈՒղղորդիչը պատրաստված 30Х30մմ մետաղական անկյունակից: ՈՒղղորդիչը 8 շարք բարձրության վրա, յուրաքանչյուր շարքի բարձրությունը մյուսից 160-ից 165մմ: ՈՒղղորդիչի բացվածքը 740մմ, որի վրա տեղադրվում է հացով բեռնավորված տեփուրը սահուն շարժելու համար: ՈՒղղորդիչը հավաքված կունգի ամբողջ խորությամբ	գ/մ	1000
6	Ներսի տարածքի և հատակի երեսապատված թիթեղի վերանորոգում	մ2	6000
7	Ներսի տարածքի փայտե հիմնակմախքի վերանորոգում	մ3	500
8	Արտաքին շերտի մետաղական թիթեղի վերանորոգում	մ2	4000
9	Արտաքին շերտի պաշտպանիչ գույնով ներկում	մ2	1500
	Ընդամենը՝առավելագույն գումարը 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ		

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Բոլոր փոխարինվող պահեստամասերը, նյութերը և նյութական միջոցները չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

Հ/հ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/Մ	Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/				
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300 կմ-ից ավելի

	4. Հեռակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում						
1	3/4 դյույմանոց նիկելապատ ջրի ծորակի փոխարինումը նորով	գ/մ	3 000	3 150	3 308	3 474	3 648
2	3/4 դյույմանոց ջրի ծորակից դեպի ջրի բաք տանող խողովակի ամրացում, եռակցում	գ/մ	10	10	10	10	10
3	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված ոտքերի ամրացում, եռակցում	գ/մ	13 000	19 950	20 948	21 996	20000
4	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված կափարիչի ամրացում, ծխնիների եռակցում	գ/մ	8 000	8 400	8 820	9 261	9 725
5	Ջրի բաքի կափարիչի տեղադրում	հատ	10	10	10	10	10
6	Ջրի բաքի դեֆորմացված մակերեսի ուղղում	հատ	3 000	3 150	3 308	3 474	3 648
7	Ջրի բաքի կափարիչի ռետինե հերմետիկի ամրացում	հատ	10	10	10	10	10
	Ընդամենը՝առավելագույն գումարը		3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ				

Մատուցվելիք ծառայությունների հեռավորությունները հաշվարկված է ք.Երևանից:

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Վերանորոգման աշխատանքները պետք իրականացվեն զորամասերում, միայն խիստ անհրաժեշտության դեպքում նախապես ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության գրավոր թույլտվություն ստանալուց հետո տեղափոխել կազմակերպության արհեստանոց:

Բոլոր փոխարինվող պահեստամասերը, նյութերը և նյութական միջոցները չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2018թ. 1-ին կիսամյակում, 3-րդ և 4-րդ (բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.) եռամսյակներում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊՊԿ

Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ" ԱՁ
ք. Երևան, Շիրակի փ., 68շ, բն.19
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 150028023280100
ՀՎՀՀ 87378664

Ա. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 2

№ ԲՄԾՁԲ-7/2-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ						
		հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝							
1	Գույքի վերանորոգում	2 000 000	3 000 000	3 000 000	3 000 000	4 000 000	4 000 000	4 000 000
2	Ավտոսառնարան ռեֆրիժերատորի սառեցնող համակարգի վերանորոգում	500 000	750 000	750 000	750 000	1 000 000	1 000 000	1 000 000
3	Կունգի վերաձևափոխում հացատարի	2 000 000	3 000 000	3 000 000	3 000 000	4 000 000	4 000 000	4 000 000
4	Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում	1 750 000	2 625 000	2 625 000	2 625 000	3 500 000	3 500 000	3 500 000

CPV-ի կոդը՝ 50881300/306/9/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական գլխավոր
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ" ԱՁ
ք. Երևան, Շիրակի փ., 68շ, բն.19
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 150028023280100
ՀՎՀՀ 87378664

Ա. ՋԱՐԳԱՐՅԱՆ